ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 204 -Ա

« 14 » ՀՈՒՆԻՍԻ 2024Թ

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՌՈՄԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-մասի 4-րդ կետի, «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 20-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 52-րդ կետի 8-րդ ենթակետը, 53-րդ կետը, Ռ. Առաքելյանի հետ 2023 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված թիվ 526 աշխատանքային պայմանագրի 8-րդ կետը, հիմնավոր չհամարելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի հունիսի 3-ի թիվ 01/15/3734-2024 գրության հիման վրա Ռ. Առաքելյանի 2024 թվականի հունիսի 6-ի գրավոր բացատրությունը (մուտքի համար՝ 5141) և նկատի ունենալով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի հունվարի 24-ի թիվ 36-Ա որոշմամբ Ռ. Առաքելյանի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի համաձայն աշխատողներին խրախուսելու իրավասությունը գործատուին վերապահված լինելու պարագայում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության կազմակերպության՝ «ՀՀ

Վայոց ձորի մարզի «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողին և տնօրենին (գուծատու՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ) դրամական պարգևատրում տրամադրելու, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի պահանջները չպահպանելով 08.05.2024թ. թիվ 37 հրամանով հաստատության գիշերային պահակի և այգեպանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու համար «ՀՀ Վայոց ձորի մարզի «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Ռոման Առաքելյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում աշխատանքային պայմանագրով նշված araqelyan2109@mail.ru էլեկտրոնային հասցեով Ռ. Առաքելյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր